

րուել է միջազգային տարանցիկ առեւտրի հնուց ի վեր գործող մայրուղին: Առաջաւորասիական տարանցիկ առեւտրի կարեւորագոյն հանգուցակէտի դերը Արտաշատից արքայանիստ Դուրինին է փոխանցուել աստիճանաբար նրա քաղաքայնացմանը համընթաց³⁷:

Դուրինի տնտեսական եւ քաղաքական բարգաւաճման շարունակականութիւնը՝

ամբողջ-սրբավայրից մինչեւ արքայանիստ քաղաք-մայրաքաղաք, այն է՝ նրա կայացման հաստատուն ընթացքը, պայմանաւորուած էր քաղաքակրթական շփումների՝ ռազմական, առեւտրատնտեսական, մշակութային առնչութիւնների լայն ոլորտ ընդգրկող պատմաաշխարհագրական բուն միջավայրի առանձնայատուկ ներուժով:

37 Յ.՝ «Армянский гуманитарный вестник», вып. 2/3-1, Москва, 2009, Ереван, с. 55-56.
 37 Պրոկոպիոս Կեսարացու (Ջ դ.) վկայութեամբ՝ Դուրինի մերձակայ մարդաշատ գիւղերը բնակեցուած են եղել առեւտրականներով: Հնդկաստանից, հարեւան Վիրքից ու պարսիկների եւ Անտիոքի հոռմէացիների հպատակութեան ներքոյ գտնուող գրեթէ բոլոր տեղերից այստեղ են բերուել ապրանքներ, որոնցով նրանք առեւտուր են արել» (Օտար աղբիւրները Հայաստանի ու հայերի մասին, 5, «Բիզանդական աղբիւրներ», Ա., Պրոկոպիոս Կեսարացի, թարգմանութիւն բնագրից, արաշարքան եւ ծանօթագրութիւններ Հ. Բարթիկեանի, Երեւան, 1967, էջ 142). տե՛ս նաեւ Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. эры-XV в. н. эры), с. 109-111; А. Kalandarian, Dvin. Histoire et Archéologie de la ville Médiévale, p. 87-95.

ԱՔԵՄԵՆԵԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԻՍԱՏՐԱՊՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾՔԸ
 Ք. Ա. Զ.-Դ. ԴԱՐԵՐՈՒՄ

Յովհաննես Խորիկեան

Հերոդոտոսը, անդրադառնալով Աքեմենեան պետութեան II սատրապութեանը, գրում է. «...Միւսիացիներից, լիւդիացիներից, լասոններից, կաբալներից եւ հիւտէններից (ստացւում էր) հինգ հարիւր տաղանդ. այս էլ երկրորդ նահանգն էր»¹: Հերոդոտոսը եւս մի քանի անգամ տարբեր առիթներով յիշատակում է II սատրապութեան տարածքում գտնուող ցեղերին: Ստորեւ կը քննենք ոչ միայն Հերոդոտոսի, այլեւ միւս հին աղբիւրների տեղեկութիւնները յիշեալ ցեղերի եւ նրանց բնակեցրած երկրների վերաբերեալ:

Միւսիացիներ: Ըստ Հերոդոտոսի՝ միւսիացիները եւ լիւդիացիները այլ ժողովուրդների հետ բնակուել են Հալիւս գետից արեւմուտք ընկած շրջաններում եւ ենթարկուել են Կրեսոսի իշխանութեանը²: Պատմիչը յիշատակում է Միւսիայի Օլիմպոս լեռը³: Նա նաեւ յայտնում է, որ կարիացիները, միւսիացիները եւ լիւդիացիները սերել են Կարոս, Միւսոս եւ Լիւդոս եղբայրներից, ընդ որում՝ Միւլասայում Կարեան Զեւսի սրբավայրը պատկանել է միւսիացիներին եւ լիւդիացիներին⁴: Քսերքսէսի Հելլադա արշաւող բանակի կազմում միւսիացիները եւ լիւդիացիները յիշատակուում են միասին. «Լիւդիացիների զէնքերը շատ նման էին հելլենականներին: Լիւդիացիները հնում կոչուել են մէյոններ, իսկ Ատիւսի որդի Լիւդոսից յետոյ փոխեցին իրենց անունը

եւ կոչուեցին նրա անունով: Միւսիացիներն իրենց գլխին դնում էին տեղական սաղաւարտներ. նրանք կրում էին փոքր ասպարներ եւ ծայրերը խանձած տէգեր: Սրանք լիւդիական վերաբնակիչներ են եւ Օլիմպոս լեռան անունից կոչուում են օլիմպոսեաններ: Լիւդիացիների եւ միւսիացիների առաջնորդն էր Արտափրենէսի որդի Արտափրենէսը, որը Դատիսի հետ ներխուժել էր Մարաթոն»⁵: Փաստօրէն, Հերոդոտոսը կրկին միւսիացիներին եւ լիւդիացիներին վերագրում է ցեղային ընդհանրութիւն՝ միաժամանակ միւսիացիներին Օլիմպոս լեռան անունով անուանելով օլիմպոսեաններ: Միւսիացիները պարսկական բանակի կազմում յիշատակուում են նաեւ Պլատէայի ճակատամարտի կապակցութեամբ⁶: Ատառնէոն անունով վայրը՝ Կալէթիփէն Դիկիլիի մօտ, եւ Կայկոս դաշտը յիշատակուած են Միւսիայում՝ Լեսբոսին հանդիպակաց⁷: Սակայն Ատառնէոնը՝ ներկայիս Դիկիլիի մօտ⁸ եւ Կայկոս գետի՝ ներկայիս Բակիրչայի ստորին հոսանքի շրջանը գտնուել են I սատրապութեան տարածքում եւ կապ չունեն II սատրապութեան Միւսիա երկրի հետ:

Լիւդիացիներ: Լիւդիացիները մինչեւ պարսիկների կողմից նուաճուելը ստեղծել էին ուժեղ եւ ընդարձակ պետութիւն, որը մեղական տէրութիւնից բաժանուած էր

1 Հերոդոտոս, Պատմութիւն իմը գրքից, թարգմանութիւնը Ս. Կրկեաշարեանի (այսուհետեւ՝ Հերոդոտոս), Երեւան, 1986, III, 90:
 2 Նոյն տեղում, I, 28:
 3 Նոյն տեղում, I, 36, 43:
 4 Նոյն տեղում, I, 171:
 5 Նոյն տեղում, VII, 74: Ատիւսի որդի Լիւդոսի մասին տե՛ս նաեւ I, 7:
 6 Նոյն տեղում, IX, 32:
 7 Նոյն տեղում, I, 160; VI, 28; VIII, 106:
 8 Dictionary of Greek and Roman Geography, ed. by W. Smith, Vol. I, Boston, 1854, pp. 252-253.

Հալիս գետով⁹: Լիւզիական տէրութեան կենտրոնն էր Սարգէս քաղաքը, որի դիմաց գտնուող ընդարձակ դաշտում Հանդիպել են Կիւրոսի եւ Կրեսոսի բանակները: Հերոդոտոսը գրում է, որ այդ «դաշտով հոսում են Հիւլոսը եւ ուրիշ գետեր. սրանք թափւում են Հերմոս կոչուող առաւել խոշոր գետը, որը բխելով Մայր Դինդիւմենէի սրբազան լեռից, ծովն է թափւում Փոկայեա քաղաքի մօտ»¹⁰: Հիւլոս գետը ներկայիս Դեմիրչիչան է, իսկ Հերմոսը նոյնանուն է ներկայիս Գեդիզչային, որը Փոկայեա-Փոչա քաղաքի մօտ թափւում է ծովը: Պատմիչը յիշատակում է նաեւ Լուզիայում հոսող Տմոլոս գետը, որը բերում է ոսկու աւազ¹¹:

Հերոդոտոսը յայտնում է, որ Կիւրոսի մեկնելուց յետոյ լիւզիացի Պակտիւէսը լիւզիացիներին ապստամբութեան է դրդել Սարգէսի պարսիկ կառավարիչ Տաբալոսի ու Կիւրոսի դէմ եւ իջնելով դէպի ծով՝ վերցրել է Սարգէսի ամբողջ ոսկին: Լիւզիացի Պակտիւէսը վարձկաններ է հաւաքել եւ առափնեայ մարդկանց համոզել իր հետ արշաւել՝ Սարգէսի միջնաբերդում պաշարելով պարսիկ Տաբալոսին¹²: Տեղեկութիւնից ակնյայտ է, որ Լիւզիան արեւմուտքում չի հասել մինչեւ ծով, եւ «առափնեայ մարդիկ» I սատրապութեան մէջ յիշատակուած Հոնիացիներն են:

Միլետի տիրան Արիստագորասը պղնձէ տախտակի վրայ Հոնիացիներից արեւելք յիշատակում է լիւզիացիներին, որոնց երկիրը բարեբեր է եւ խիստ արծաթաշատ: Սրանցից արեւելք արդէն փոխվածներն են¹³:

Եփեսոս, Կոլոփոն, Լեքեդոս, Տէոս, Կլազոմենէ, Փոկայեա քաղաքները գտնուել են Լիւզիայում¹⁴:

Նոյն Արիստագորասը կազմակերպել է արշաւանք Սարգէսի դէմ՝ զօրքերի հրամանատարութիւնը յանձնելով ուրիշ միլետացիներին. «Այս նաւատորմով Հոնիացիները, հասնելով Եփեսոս, նաւերը թողնում են Եփեսոսեան երկրի Կորեսոսում, իսկ իրենք, մեծ զօրքով, արշաւում են երկրի խորքը, ուղեցոյց ունենալով Եփեսոսցիներին: Նրանք գնում էին Կաուստրիոս գետի երկայնքով. այնուհետեւ անցնելով Տմոլոսը, հասնում են Սարգէս եւ այն գրաւում անարգել...»¹⁵: Այնուհետեւ Հերոդոտոսը, հաղորդելով մարտական գործողութիւնների մասին, գրում է, որ Պակտոլոս գետն իր հետ ոսկու աւազ է բերում եւ, բխելով Տմոլոսից, անցնում է շուկայի միջով ու թափւում Հերմոս գետը, իսկ Հերմոսը թափւում է ծովը: Յիշատակում է նաեւ Տմոլոս՝ ներկայիս Բոզ Դաղ կոչուած լեռը¹⁶:

Փոխված, Լիւզիան եւ Հոնիան միասին կազմել են մէկ սատրապութիւն¹⁷: Նկարագրելով Քսերքսէսի բանակի երթուղին¹⁸ Հերոդոտոսը գրում է, որ Լիւզիայից Քսերքսէսի «զօրքն ուղղուեց դէպի Կաիկոս գետը եւ Միւսիա երկիրը, իսկ Կաիկոսից դուրս գալով, ձախ կողմում ունենալով Կանէ լեռը, Ատառնեւս (բնակավայրի) միջով անցաւ ու հասաւ Կարենէ քաղաքը: Այս քաղաքից զօրքը Թերէ դաշտի միջով գնաց Ադրամիւտտէոն քաղաքը եւ անցաւ պելասգեան Անտանդրոս քաղաքի մօտով: Երբ զօրքը գիշերելու համար կանգ առաւ

9 Հերոդոտոս, I, 72:
 10 Նոյն տեղում, I, 80:
 11 Նոյն տեղում, I, 93:
 12 Նոյն տեղում, I, 154: Str'u Gault E. Rung, *The End of the Lydian Kingdom and the Lydians after Croesus*, - "Political Memory in and after the Persian Empire", ed. by J. M. Silverman and C. Waerzeggers, Atlanta, 2015, pp. 8, 15.
 13 Հերոդոտոս, V, 49; 52:

14 Նոյն տեղում, I, 142:
 15 Նոյն տեղում, V, 101:
 16 Նոյն տեղում:
 17 Նոյն տեղում, III, 127:
 18 Երթուղու սկզբնափաստումի քննութիւնը տե՛ս Յ. Խորիկեան, *Աքեմենեան Պարսկաստանի III սատրապութեան վարչական բաժանումը*, «Համդէս ամսօրեայ», Վիեննա-Երևան, 2013, թիւ 1-12, էջ 212-218:

Իդայի ստորոտին, սկզբում ամպրոպ պայթեց ու փոթորիկ, եւ կայծակից շատերը շանթահարուեցին ու կործանուեցին»¹⁹: Կայիկոս գետը համապատասխանում է ներկայիս Բակիրչային, Կանէ լեռը՝ Կարա Դաղին, Չանդարլիի մօտ, Կարենէն՝ Ասսար Կայային, Ադրամիւտտէոնը՝ Էդրեմիտին, Անտանդրոսը՝ Դեւրէն-Աւելիարին, Իդան էլ՝ Կազդաղին²⁰:

Լասոններ, կարալներ, հիւտէններ: Հիւտէնների մասին այլ տեղեկութիւններ յոյն հեղինակը չի հաղորդում, իսկ Քսերքսէսի Հելլադա արշաւող բանակի կազմի մասին կարդում ենք. «Կաբալները, (որոնք) մէյոններ են եւ կոչոււմ են լասոնիներ, ունէին նոյն հանդերձանքը, ինչ կիլիկեցիները. այդ ես (Հերոդոտոսը - Յ. Խ.) կը նկարագրեմ կիլիկեան զօրամասերի մասին խօսելիս: Իսկ միլիացիները կրում էին կարճ նիզակներ եւ ճարմանդով ամրացրած հագուստ: Նրանցից ոմանք ունէին լիւկիական աղեղներ, իսկ գլուխներին՝ կաւէ սաղաւարտներ: Այս բոլորին առաջնորդում էր Հիւտանէսի որդի Բադրէսը»²¹: Որոշ ուսումնասիրողներ հիւտէնների փոխարէն նախապատուութիւն են տալիս հիւզէններ ձեւին եւ նոյնացնում են Հերոդոտոսի սիգիւններին²²: Հիւտէնները Հիւտենա քաղաքով տեղադրուած են սատրապութեան ծայր հարաւում, Լիւկիային եւ Կարիային մօտ²³: Հիւտէններին նոյնացրել են ետէններին, որոնք լեռնային ցեղ էին եւ յայտնի

էին Ետեննա քաղաքով²⁴: Պիսիդիայի լեռնաբնակ ետէններին Ք. ա. Գ. դարում յիշատակում է Պոլիբիոսը²⁵:

Հեկատէոս Միլեթացին Լիւզիայում յիշատակում է Կիւնէ, Միմնեդոս անունով քաղաքները²⁶:

Աքեմենեան Պարսկաստանի տիրապետութեան ժամանակաշրջանի Փոքր Ասիայի վարչական բաժանման մասին արժէքաւոր են Քսենոփոնի տեղեկութիւնները: Պարսկական զօրքերի հաւաքատեղի Կաստոլոսի դաշտը գտնուել է Լիւզիայում²⁷, Հերմոս գետի հովտում: Ըստ Քսենոփոնի՝ Լիւզիան հարաւում հասել է մինչեւ Մէանդրոս գետը, որից յետոյ Փոխված էր²⁸: Կերամոն-Ագորա քաղաքը գտնուել է Միւսիայի ծայր սահմանում կամ դրա ուղղութեամբ²⁹: Կիւրոս Կրտսերը կռուել է պիսիդիացիների եւ միւսիացիների դէմ՝ նրանց համար նշանակելով կառավարիչներ³⁰: «Անաբասիս» վերջում Լիւզիան Արտիմասի ղեկավարութեամբ յիշատակում է որպէս առանձին սատրապութիւն³¹, իսկ «Կիւրոպեդիայում» Լիւզիան Հոնիայի հետ մէկ սատրապութիւն է³²: Լիւզիան եւ Հոնիան Սպիթրիդատէսի ղեկավարութեամբ մէկ սատրապութիւն են նաեւ Աքեմենեան պետութեան

19 Հերոդոտոս, VII, 42:
 20 Դաստելով Թուկիդիդէսի տեղեկութիւնները՝ վերջիններս վարչական առումով ենթարկում էին Տիսապիտանիսին (տե՛ս Фукидид, *История*, пер. Ф. Мищенко, Москва, 2012, с. 453):
 21 Հերոդոտոս, VII, 77:
 22 Նոյն տեղում, V, 9: Str'u E. Herzfeld, *The Persian Empire. Studies in Geography and Ethnography of the Ancient Near East*, Wiesbaden, 1968, p. 311; *A Commentary on Herodotus Books I-IV*, ed. by O. Murray, A. Moreno, Oxford University Press, Inc., New York, 2007, p. 483.
 23 E. Herzfeld, *The Persian Empire*, p. 311.

24 *A Commentary on Herodotus Books I-IV*, p. 483.
 25 Polybius, *The Histories*, with an English translation by W. R. Paton, Vol. III, London, Cambridge, Massachusetts, 1979, Loeb Classical Library, V, 73, p. 180.
 26 C. Müller, *Fragmenta Historicorum Graecorum*, Vol. I, Parisiis, 1841, fr. 221, 222, p. 15.
 27 Քսենոփոն, *Անաբասիս*, թարգմ. Ս. Կրկեսաւրեանի, Երևան, 1970, էջ 7, 31:
 28 Նոյն տեղում, էջ 10:
 29 Նոյն տեղում, էջ 11:
 30 Նոյն տեղում, էջ 32: Միւսիացիները եւ պիսիդիացիները յարձակումներ էին գործում հարեւան տարածքների վրայ (Ксенофонт, *Греческая история*, пер. С. Лурье, Москва, 2010, с. 307):
 31 Քսենոփոն, *Անաբասիս*, էջ 197:
 32 Քսենոփոն, *Կիրոպեդիա*, թարգմ. Ս. Կրկեսաւրեանի (այսուհետեւ՝ Կիրոպեդիա), Երևան, 2000, էջ 355:

մայրամուտին³³, ինչը պայմանավորված էր ռազմական իրադրություններով: Արևմտյան Սպիթիակոսի յիշատակում է նաև որպես Լիւզիայի սատրապ³⁴, իսկ Դիոդորոս Սիկիլիացին՝ Հոնիայի սատրապ, կամ էլ Հոնիան եւ Լիւզիան համարում է մէկ սատրապութիւն³⁵: Համաձայն Հերոդոտոսի՝ Փոլիպիան, Լիւզիան, Հոնիան Օրոյտէսի սատրապութեան կազմում էին³⁶: Դիոդորոսը եւ Աթենիոսը հաղորդում են, որ Դարեհ Ա.-ն հետ է վերադարձնում Հոնիան, Դասկիլէան եւ Սարգէսը³⁷:

Աքեմենեան Պարսկաստանի II սատրապութեան ցեղերի եւ ժողովուրդների մասին կարեւոր տեղեկութիւններ է հաղորդում ամասիացի աշխարհագետ Ստրաբոնը: Այսպէս, Ստրաբոնը միւսիացիներին համարում է թրակիական ցեղ, որոնց մի հատուածը բնակուել է լիւզիացիների, փոլիպիացիների եւ տրոյացիների միջեւ³⁸: Ստրաբոնը միւսիացիներին, մէնոներին եւ

մէյոներին³⁹ համարում է մէկ ժողովուրդ⁴⁰: Համաձայն Ստրաբոնի՝ Միւսիան գտնուել է Բիւթանիայի եւ Էսեպոս գետի գետաբերանի միջեւ՝ յարելով ծովին եւ հասնելով գրեթէ մինչեւ Օլիմպոս⁴¹: Միւսիային սահմանակցել է Փոլիպիա Էպիլոտեա, որը ձգուել է մինչեւ Ասկանիա լճի արեւելեան հատուածը, իսկ միւսիական Ասկանիան գտնուել է Նիկէայի մօտ, այսինքն՝ կրկին լճի արեւելեան կողմում⁴²: Սակայն Քսենոփոնի մի տեղեկութիւնը թոյլ է տալիս ենթադրել, որ Ասկանիա լճից արեւմուտք ընկած շրջանն էլ յայտնի է եղել միւսիական անուանումով, քանի որ յոյն պատմիչը յիշատակում է միւսիական Կիոս քաղաքը⁴³: Ստրաբոնը յայտնում է, որ, ըստ Հոմերոսի, միւսիացիների սահմանը Էսեպոս գետն է, որը միաժամանակ Տրոյադայի հիւսիսային եւ արեւելեան սահմանն էր⁴⁴: Տարբեր ժամանակներում, Ստրաբոնի հաղորդմամբ, Տրոյային իշխել են փոլիպիացիները, միւսիացիները, լիւզիացիները, էոլեանները, հոնիացիները, պարսիկները եւ այլք⁴⁵:

Միւսիան համարուել է Տրոյայի գաւառներից⁴⁶, ինչը վաղ ժամանակներից մնացած յիշողութիւն պէտք է լինէր: Ստրաբոնը, մէջբերելով հին հեղինակների տեղեկութիւնները, յայտնում է, որ Բիւթանիայում՝ Ասկանիա լճի շուրջ, բնա-

33 Արիանոս, Ալեքսանդրի արշաւանքը, Ալեքսանդր Մակեդոնացի (այսուհետեւ՝ Արիանոս), Երեւան, 1987, էջ 28: Ըստ Արիանոսի՝ Հերմոս գետը սկիզբ է առել Մայր Դիոնիսիանա լեռից՝ Չմիոնիա քաղաքի մօտ, եւ թափուել է Էոլիական ծովը, Կախտրոս հարթավայրը գտնուել է Լիւզիայում, Կախտրոս դաշտավայրը՝ Միւսիայում, Կարիայում մինչեւ հոնիական Միլետ քաղաքը ձգուել է Մէանդրոս գետի դաշտավայրը (նոյն տեղում, էջ 178):

34 Արիանոս, էջ 33:

35 Դիոդորոս Սիկիլիացի, Պատմական գրադարան, թարգմ. քննադրից, առաջաբան եւ ծանօթագրութիւններ Ս. Կրկեաշարեանի, Երեւան, 1985, էջ 80-81 (այսուհետեւ՝ Դիոդորոս Սիկիլիացի). *Diodori Bibliotheca Historica*, ed. L. Dindorfius, Vol. III, Lipsiae, 1826, XVI, 47, p. 51; A. T. Olmstead, *History of the Persian Empire*, Third Impression, Chicago, 1960, p. 496.

36 Հերոդոտոս, III, 127:

37 A. T. Olmstead, *History of the Persian Empire*, pp. 110-111.

38 Տրաբոն, *География в 17 книгах* (перевод, статья и комментарии Г. А. Страгановского), Ленинград, 1964, с. 270.

39 Հոմերոսը լիւզիացիներին չգիտի եւ յիշատակում է մէնոներին, ինչպէս նաեւ լիւզիացիներին, փոլիպիացիներին եւ միւսիացիներին (տե՛ս Հոմերոս, *Իլիական*, հին յունարէնից թարգմ. Հ. Համբարձումեան, Երեւան, 1955, II, 355; III, 400; IV, 140; X, 430; *The Egyptian and Hittite Empires*, The Cambridge Ancient History, Vol. II, Cambridge, 1931, pp. 10-11):

40 Տրաբոն, с. 516.

41 Նոյն տեղում, էջ 529:

42 Նոյն տեղում:

43 Ксенофонт, *Греческая история*, с. 257, 501; Հերոդոտոս, V, 122:

44 Տրաբոն, с. 529.

45 Նոյն տեղում, էջ 530:

46 Նոյն տեղում, էջ 16:

կուել են նաեւ միւսիացիները, եւ թրակիական Բոսփոր նեղուցը նախկինում կոչուել է միւսիական Բոսփոր: Այսինքն, ըստ Հեղինակի, միւսիացիները եղել են թրակիացիներ⁴⁷: Աշխարհագետը նաեւ գրում է, որ բիւթանիացիներից հարաւ՝ Օլիմպոս լեռան շուրջ, բնակուել են միւսիացիները, որոնց անուանում են նաեւ օլիմպեաններ կամ Հելլեսպոնտացիներ, եւ փոլիպիացիներ⁴⁸: Բիւթանիացիներից հարաւ գտնուել է Միւսիան, եւ հնում բիւթանացիներին համարել են միւսիացիներ⁴⁹: Օլիմպոսի շուրջ պարող միւսիացիները փոլիպիացիների⁵⁰

47 Նոյն տեղում, էջ 530, 635:

48 Նոյն տեղում, էջ 530:

49 Նոյն տեղում, էջ 509, 528: Ըստ Ստրաբոնի՝ Պրոսա քաղաքը, ներկայիս Բրոսան (տե՛ս W. M. Ramsay, *The Historical Geography of Asia Minor*, London, 1890, p. 180) գտնուել է Միւսիական Օլիմպոսում եւ սահմանակցել է արեւելքում՝ փոլիպիացիներին, հարաւում՝ միւսիացիներին (նոյն տեղում, էջ 528): Ըստ Պոլիբիոսի՝ Միւսիան հասնում էր մինչեւ Բիւզանդիոն, որի մօտ գտնուող հողերը գրաւել են բիւթանացիները (տե՛ս Polybius, *The Histories*, with an English translation by W. R. Paton, Vol. II, London, Cambridge, Massachusetts, 1979, Loeb Classical Library, IV, 52, p. 426):

50 Ի. Դեակոնովի կարծիքով՝ արեւմտեան մուշկերի կամ մուսերի անունը կապուած է միւսերի հետ (տե՛ս *История древнего мира*, т. II, под ред. И. М. Дьяконова, В. Д. Героновои, И. С. Свенцицкой, М., 1989, с. 48): Միւսիացիների երկիրը, թերեւս, կապուած է Սուպիլուլիումաս Բ.-ի արձանագրութիւնում յիշատակուած Մասս երկրի հետ (տե՛ս Ա. Քոսեան, *Մ. թ. ա. XII դարի մերձատրաքեւեան ճգնաժամը եւ Հայկական լեռնաշխարհը*, Երեւան, 1999, էջ 37, 38; G. Del Monte, J. Tischler, *Répertoire Géographique des Textes Cunéiformes*, VI (այսուհետեւ՝ RGTC, VI). *Die Orts- und Gewässernamen der hethitischen Texte*, Wiesbaden, 1978, SS. 264-265): Ըստ լիւզիացի պատմիչ Քսանթոսի (Ք. ա. Ե. դար), փոլիպիական տեղաշարժը եղել է Տրոյական պատերազմից յետոյ՝ միւսիացիների հետ միասին (նոյն տեղում, էջ 100): Բալկանեան ժողովուրդների տեղաշարժը Փոքր Ասիա, ամենայն հաւանականութեամբ, պիտի ընդգրկէր Տրոյան, Սանգարիոսի հովիտը եւ դէպի արեւելք ընկած որոշ այլ շրջաններ, բայց ոչ խէթերի մայրաքաղաք Խաթրուսաքը եւ կենտրոնական Փոքր

ճնշման տակ շարժուել են դէպի Կայիկոս գետի ակունքների շրջանը եւ Պերգամոն (այժմ՝ Բերգամա) մինչեւ Տելթրանիա⁵¹ ու աւելի հարաւ՝ Թիատիրա քաղաքը, Լիւզիային մօտ: Ընդ որում՝ Ստրաբոնը յայտնում է, որ միւսիացիներին համարել են նաեւ լիւզիացիներ⁵²: Միւսիան գտնուել է Իզա լեռան եւ Կատակեկամենէի (բառացի՝ «խանձուած, այրուած»)՝ Հերմոս գետի միջին հոսանքի միջեւ, որը ոմանք համարում են միւսիական, իսկ միւսները՝ մէնական կամ լիւզիական տարածք⁵³: Միւսիայի մի հատուածը, ըստ Ստրաբոնի, կոչուել է աքրեստեանեան Միւսիա: Այստեղից հոսող գետերը Մակեստոս գետի (այժմ՝ Սիմալ) հետ թափուել են Ռինդակոս գետը⁵⁴: Միւսիայի գաւառներից է եղել նաեւ Մորենան⁵⁵, Մակեստոսի վերնագաւառում: Ստրաբոնի մի տեղեկութիւնը թոյլ է տալիս ենթադրել, որ միւսիացիները հնում

Ասիայի մեծ մասը: Այս միգրացիան առաւելապէս ընդգրկել է Հալիսի արեւմտեան, հարաւարեւմտեան հոսանքի շրջանը (նոյն տեղում, էջ 106, 174):

51 Տեպրանիայի դաշտավայրը եւ Դեմարատոսի յիշատակում է Հերոդոտոսը (II, 10; VI, 65), Տեպրանիայի եւ Հալիսառնէի տիրակալ Պրոկլէսի՝ Դեմարատոսի սերնդից, Քսենոփոնը (տե՛ս Քսենոփոն, *Անաբասիս*, էջ 37, 196; Ксенофонт, *Греческая история*, с. 305): Տեպրանիան (ներկայիս Բայլար-Թէփէն) Միւսիայի մաս է համարում նաեւ Պիլիոս Աւազը (տե՛ս Pliny, *Natural History*, Vol. II, with an English translation by H. Rackham, Cambridge-Massachusetts-London, 1947, Loeb Classical Library, V, 125, p. 314):

52 Տրաբոն, с. 535-536, 586. Ստրաբոնը Կայիկոսի դաշտավայրը համարում է լուսադոյնը Միւսիայում (նոյն տեղում, էջ 585):

53 Նոյն տեղում, էջ 540, 542, 588: Միւսիական երկիր Կատակեկամենէում որոշ հին հեղինակներ տեղադրում են արիմների ցեղը (նոյն տեղում, էջ 587):

54 Նոյն տեղում, էջ 538, 540: Տե՛ս նաեւ Pliny, *Natural History*, V, 142, p. 326: Մակեստոս գետը սկիզբ է առնում Սիմալ լճից եւ վերին հոսանքի շրջանն էլ կոչում է Աքրաէիտիս (տե՛ս W. M. Ramsay, *The Historical Geography of Asia Minor*, p. 147):

55 Տրաբոն, с. 538.

բնակուել են նաեւ Մէնոնիայում, ընդ որում մէնոնները կոչուել են լիւզիացիներ: Նրանք հիւսիսում տարածուել են մինչեւ Թերէի դաշտավայրը Իդա լեռից հարաւ⁵⁶: Թերէի դաշտը, Կայիկոսի հովիտը (Հերոդոտոսի յիշատակած Միւսիայի Կայկոս դաշտը⁵⁷) եւ Պերգամոնը Միւսիայում յիշատակուած է Քսենոփոնը, ընդ որում՝ Պարթենիոն, Ապոլլոնիա քաղաքներն արգէն Լիւզիայում են⁵⁸: Սկիւաքս Կարիանդացին հաղորդում է, որ Միւսան հին ժամանակներում տարածուել է Իդա լեռից հարաւ գտնուող ծովափնեայ Անտանդրոսից (ներկայիս Իլիշայի մօտ) մինչեւ Տեւտրանիա (ներկայիս Բայլար-Թեփէ), եւ այդ տարածքը նրա ժամանակ Լիւզիայի մէջ էր, իսկ միւսիացիները շարժուել էին մայրցամաքի խորքը⁵⁹: Հերմոս գետը, ըստ Ստրաբոնի, հոսում է Միւսիայից⁶⁰, այսինքն՝ Մէնոնիան հեղինակը համարում է միւսիական

56 Նոյն տեղում, էջ 549, 586: Լիւզիացիներին մէյոններ անուանում է Գաեւ Պիլիմոս Աւագը եւ տեղադրում Կոզամոս գետի հովտում՝ Տմոլոս լեռան հիւսիսային ստորոտին (տե՛ս Pliny, *Natural History*, V, 110, p. 302): Կոզամոս գետը Հերմոս գետի վերին հոսանքի անուանումն է ձախակողմեան եւ աջակողմեան վտակներով:
 57 Հերոդոտոս, VI, 28: Կայիկոսի հովիտն աչքի էր ընկնում բացառիկ բերրիութեամբ (տե՛ս P. Briant, *From Cyrus to Alexander. A History of the Persian Empire*, translated by P. T. Daniels, Winona Lake, Indiana, Eisenbrauns, 2002, p. 500): Կայիկոսի հովիտում էր գտնուած խեթական արձանագրութիւններում յիշատակուող Սեխա երկիրը (տե՛ս Ա. Քոսեան, *Մ. թ. ա. XII դարի մերձատրաքեթեան ճգնաժամը...*, էջ 25, 43. Ռ. Ղազարեան, *Մուրսիլի II-ի «տասնամեայ» տարեգրութիւնը*, էջ 92-93, Երեւան, 2013; RGTC, VI, SS. 547-548):
 58 Քսենոփոն, *Անարասիս*, էջ 195-197: Մէկ այլ տեղում Քսենոփոնը Թերէական դաշտը յիշատակում է Միւսիայից դուրս (տե՛ս Ксенофонт, *Греческая история*, с. 499):
 59 Скилак Кариандский, *Перипл обитаемого моря*, - «Вестник древней истории», 1988, № 2, с. 261. Հեղինակը յիշատակում է Գաեւ բազմաթիւ բնակավայրեր, որոնց մասին տե՛ս նոյն տեղում, էջ 261-262:
 60 Страбон, с. 586.

տարածք: Ստրաբոնը յայտնում է, որ լիւզիացիներից յետոյ միւսիացիներն են եւ Փիլադելփիա քաղաքը⁶¹ ներկայիս Ալաշեհիրը: Փիլադելփիա քաղաքն, անկասկած, պէտք է տեղադրել Լիւզիայի մէջ, քանի որ Ստրաբոնը տուեալ հատուածում լիւզիացիներին նեղ առումով տեղորոշում է միայն Սարգէսի շրջանում:

Ստրաբոնը Տմոլոս լեռն ամբողջութեամբ տեղադրում է Լիւզիայում, իսկ Մեսոգիս լեռը Կելենէից մինչեւ Միկալէ: Համաձայն հեղինակի՝ Կելենէի եւ Ապամէայի մօտ լեռը զբաղեցրել են փոփոխացիները, իսկ միւս մասը՝ լիւզիացիները եւ միւսիացիները, մնացած մասերը՝ կարիացիները եւ հոնիացիները⁶²: Փաստօրէն, լեռնաշղթայից հիւսիս ընկած լեռնաճիւղերը գտնուել են Լիւզիայի կազմում, իսկ միւսիացիների մասին խօսք լինել չի կարող, քանի որ Մեսոգիս լեռից՝ ներկայիս Այդին լեռնաշղթայից կամ Քեստանեհ Դաղից⁶³ հիւսիս ընկած էր Տմոլոս լեռը (ներկայիս Բողդազը), որը բաժանում էր միւսիացի կոչուող մէնոններին Մեսոգիս լեռից: Մեսոգիս լեռան եւ Տմոլոսի միջեւ գտնուել է Կարիստրա դաշտավայրը⁶⁴, որը Քսենոփոնի յիշատակած Կայստրոս դաշտն է⁶⁵ ներկայիս Փոքր Մենդերէսի հովիտը: Լիւզիացիները հարաւում հասել են մինչեւ Մէանդրոս գետը⁶⁶:

Ինչ վերաբերում է II սատրապութեան միւս ցեղերին, Ստրաբոնը յիշատակում է կաբալներին, որոնց գաւառը կոչուել է Կաբալիդա, պիսիդիացիներից արեւմուտք, միլիացիներից հիւսիս, որտեղ գտնուում էր

61 Նոյն տեղում, էջ 588:
 62 Նոյն տեղում, էջ 589:
 63 *Dictionary of Greek and Roman Geography*, ed. by W. Smith, v. II, Boston, 1857, p. 332.
 64 Страбон, с. 586, 589. Կաիստրոս գետը կոչում է Փոքր Մէանդրոս (տե՛ս W. M. Ramsay, *The Historical Geography of Asia Minor*, p. 114):
 65 Կիրոպեդիա, էջ 60:
 66 Страбон, с. 607.

Կիբիրա քաղաքը, որի բնակիչները լիւզիացիների սերունդներն էին⁶⁷: Ստրաբոնի տեղեկութիւններից պարզուած է, որ կաբալների բնակութեան բուն վայրը Կիբիրա քաղաքի շրջանը, մտել է լիւզիական սատրապութեան մէջ: Կաբալների մասին Հերոդոտոսի տեղեկութիւնները⁶⁸ թոյլ են տալիս ենթադրել, որ Քսերքսէսի ժամանակ կաբալները վարչական առումով միացուել են միլիացիներին, լիւզիացիներին, պիսիդիացիներին, այսինքն՝ մտել են I սատրապութեան մէջ: Ալեքսանդր Մակեդոնացու արշաւանքների ժամանակ նոյնպէս կաբալների երկիրը լիւզիական սատրապութեան մէջ էր, իսկ պիսիդիացիները, որոնք յայտնի էին նաեւ սելզեր կամ սոլիմներ անուններով, եւ Տելմեսոս, Սագալաս քաղաքներով⁶⁹, թերեւս առանձին վարչական միաւորի մէջ էին⁷⁰, որը տուեալ ժամանակաշրջանում կենտրոնական իշխանութեանը չէր ենթարկուած: Դատելով Արիանոսի տեղեկութիւններից՝ կաբալների երկրի արեւելեան մասը նոյնանում է Մեծ Փոփոխի Միլիաս կոչուող մարզին, որը յետագայում միացուել էր Լիւզիային⁷¹: Նկատենք, որ Դարեհ Ա-ի

67 Նոյն տեղում, էջ 590-591: Կաբալների եւ Կիբիրայի մասին յիշատակում է Գաեւ Հեկատէոս Միլեթացին (տե՛ս C. Müller, *Fragmenta Historiarum Graecorum*, Vol. I, fr. 223, p. 15): Կաբալների հետ, թերեւս, կապուած է Լատիկէայից արեւելք ընկած Կաբալլուկոմէ-Կաբալլան (տե՛ս W. M. Ramsay, *The Historical Geography of Asia Minor*, p. 359):
 68 Հերոդոտոս, VII, 77:
 69 Արիանոս, էջ 49-50; Pliny, *Natural History*, V, 94, p. 292.
 70 Плуларх, Александр, XVIII, - «Избранные жизнеописания», т. II, Москва, 1987, с. 378; Արիանոս, էջ 49-50; Ռուփոս, *Ալեքսանդր Մակեդոնացու պատմութիւնը*, - «Ալեքսանդր Մակեդոնացի» (պատմական Ռուփոս), Երեւան, 1987, էջ 411: Դիոդորոս Սիկիլիացին անուանել է Պիսիդիան համարում է առանձին երկիր (տե՛ս Դիոդորոս Սիկիլիացի, էջ 57, 75, 112):
 71 Արիանոս, էջ 45; A. T. Olmstead, *History of the Persian Empire*, p. 500. Միլիասը Լիւկատնիայում

վարչական վերափոխումների հետեւանքով լիւզիացիները եւ միլիացիները ընդգրկուած են առաջին սատրապութեան մէջ⁷²: Հերոդոտոսը յայտնում է, որ Լիւզիան հնում կոչուել է Միլիաս, իսկ միլիացիներն էլ յայտնի էին սոլիմներ անունով⁷³: Վերջինս կապուած է պիսիդիացիներին տրուող սոլիմ անուանը, որը իւրացուել էր նուաճող պիսիդիացիների կողմից: Ալեքսանդրի մահից յետոյ Անտիպատրոսը Մեծ Փոփոխի Լիւզիայի եւ Պամփիլիայի հետ տալիս է Անտիգոնոսին⁷⁴, այսինքն՝ կաբալների երկիրը նոյնպէս յայտնուած է նոր վարչաքաղաքական միաւորի մէջ:

Կիւրոս Կրտսերը Լիւզիայի սատրապն էր եւ մերձծովեան շրջանների զօրքերի ստրատեգոսը⁷⁵: Վերջին պաշտօնը յիշատակում է նաեւ Հերոդոտոսը՝ Հիւզառնէսին համարելով Ասիայի առափնեայ

յիշատակում է Պիլիմոս Աւագը (տե՛ս Pliny, *Natural History*, V, 95, p. 292), որը պէտք է ուղղել Լիւկիա: Բացառուած չէ, որ Միլիասը կապուած է Հերոդոտոսի Միլիասայի հետ (տե՛ս Հերոդոտոս, I, 171; V, 121; W. M. Ramsay, *The Historical Geography of Asia Minor*, p. 417), որն անելի ուշ Մաւսոլոսի մայրաքաղաքն էր մինչեւ Հալիկարնաս տեղափոխուելը (տե՛ս A. T. Olmstead, *History of the Persian Empire*, p. 426): Պիլիմոսը Միլիասայի յիշատակում է Պամփիլիայից արեւմուտք (տե՛ս Polybius, *The Histories*, with an English translation by W. R. Paton, Vol. III, London, Cambridge, Massachusetts, 1979, Loeb Classical Library, V, 77, p. 190):
 72 Հերոդոտոս, III, 90:
 73 Նոյն տեղում, I, 173:
 74 Դիոդորոս Սիկիլիացի, էջ 110, 113:
 75 *Plutarch's Lives*, with an English translation by B. Perrin, Vol. XI, Cambridge, Massachusetts, London, 1954, Loeb Classical Library, Artaxerxes, II, 3, p. 130; Э. В. Рунг, *Греция и Ахеменидская держава: История дипломатических отношений в VI-IV вв. до н. э.*, Санкт-Петербург, 2008, с. 277; Ch. Tuplin, *A Foreigner's Perspective: Xenophon in Anatolia*, in: *The Achaemenid Impact on Local Populations and Cultures in Anatolia (6th-4th Centuries B.C.)*, Istanbul, 2007, p. 12.

զօրքերի զօրավար⁷⁶: Ստրատեգոս-զօրավարի պաշտօնը համապատասխանում է հին պարսկական կարան եզրոյթին (*kāra-*ից «զօրք, ժողովուրդ»): Մասնագիտական գրականութեան մէջ պարսկական կարանի գործառոյթների վերաբերեալ կայ երկու տեսակէտ: Համաձայն առաջինի՝ կարան համարուած պարսից զօրավարի ենթակայութեան տակ եղել են սատրապներ, այսինքն՝ կարանն ունեցել է վարչական աւելի բարձր աստիճան: Միւս տեսակէտի համաձայն՝ կարան է համարուել ցանկացած պարսիկ զօրավար, ով նշանակուել է արքայի կողմից ռազմական այս կամ այն արշաւանքը գլխավորելու համար⁷⁷: Հետաքրքիր է նաեւ, որ որոշ ուսումնասիրողներ Հիւզառնէսի պաշտօնն ընդունում են «Ասիայի առափնեայ ժողովուրդների ստրատեգ» թարգմանութեամբ, ընդ որում՝ «առափնեայ ժողովուրդներ» արտայայտութիւնը համապատասխան համարելով հին պարսկական *tayaiy drayahyā*-ին: «Առափնեայ ժողովուրդների զօրավարի» պաշտօնը կարող էր վերաբերել ինչպէս Դասիլիէայի, այնպէս էլ Լիւզիայի սատրապին⁷⁸: Սակայն աշխարհագրական նման նոյնացումը որեւէ սատրապութեան հետ հիմնաւորուած չէ, քանի որ խօսքը մերձձովեան շրջանների զօրքերի հրամանատարի մասին է:

Ստրատեգոսի պաշտօնը Կիւրոս Կրտսերից առաջ եւ յետոյ վարում էր Տիւսափեռնէսը՝ Լիւզիայի եւ Կարիայի սատրապը⁷⁹: Ընդհանրապէս սկզբնաղբերների

տեղեկութիւնները թոյլ են տալիս ենթադրել, որ Լիւզիայի սատրապը գոնէ տարբեր ժամանակներում վերահսկողութիւն է ունեցել Էոլիայի եւ Հոնիայի յոյների նկատմամբ⁸⁰: Պլուտարքոսը Սարգէսը համարում է պարսիկների մերձսեւծովեան տիրոյթների գլխավոր յենակէտը⁸¹: Արիանոսը յիշատակում է Լիւզիայի սատրապ Սպիթրիդատէսին⁸²: Ալեքսանդր Մակեդոնացին աւելի ուշ Սարգէսը յանձնում է առանձին կառավարչի, իսկ Լիւզիայի մնացած մարզերի սատրապ է նշանակում Ասանդրոսին⁸³, չնայած Լիւզիան համարում էր մէկ սատրապութիւն⁸⁴:

Կոռնելիոս Նեպոտը Դատամէսի ապստամբութեան մասին խօսելիս նշում է, որ Հոնիայի, Լիւզիայի եւ ամբողջ Փոնդիայի (այսինքն՝ Մեծ եւ Փոքր) սատրապ Արիոբարզանէսը Ք. ա. 367 թ. միանում է Դատամէսին⁸⁵, ում յաջողում է գրաւել

Плутарх, *Агесилай*, IX, X, - "Избранные жизнеописания", т. II, Москва, 1987, с. 245-246; Thucydides, *History of the Peloponnesian war*, with an English translation by Ch. F. Smith, Vol. IV, books VII-VIII, London, Cambridge, Massachusetts, 1958, Loeb Classical Library, VIII, 5, 5, p. 198; *Cornelius Nepos*, by T. K. Arnold, E. A. Johnson, New-York, 1850, Agesilaus, 17, 2, 3; 3, 4, pp. 68-69; *Cornelius Nepos*, London, Cambridge, Massachusetts, 1960, Loeb Classical Library, Agesilaus, XVII, II, 3; III, 5; *Polyaenus's Stratagems of War*, by R. Shepherd, London, 1793, Agesilaus, II, I, 9, p. 53.

80 A. T. Olmstead, *History of the Persian Empire*, p. 242. Դիոդորոս Սիկիլիացիի Կիրոս Կրտսերին համարում է Լիւզիայի ու Փոնդիայի սատրապ, որը Հոնիայի, Էոլիայի եւ յարակից շրջանների կառավարիչ էր նշանակել ընկերոջը՝ Թամուսին (Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. I, pars I, Lipsiae, 1828, XIV, 19, p. 826):

81 Плутарх, *Александр*, XVII, с. 377.
 82 Արիանոս, էջ 33:
 83 Նոյն տեղում, էջ 34:
 84 Նոյն տեղում, էջ 200: Ռուփոս, էջ 315, 327, 411, 596:
 85 *Cornelius Nepos*, *Datames*, 14, 2, 5, p. 54; *Cornelius Nepos* (Loeb Classical Library), *Datames*, XIV, II, 2, p. 512.

76 Հերոդոտոս, VII, 135:
 77 Э. В. Рунг, *Тиссаферн и Гидарниды в контексте политической истории Ахеменидской державы в V в. до н. э.*, - "Вестник древней истории", 2012, № 1, с. 19-21.
 78 Նոյն տեղում, էջ 22-23:
 79 Քսենոփոն, *Անաբասիս*, էջ 8, 182; Ксенофонт, *Греческая история*, с. 304, 323; Xenophon, *Scripta Minora*, with an English translation by E. C. Marchant, London, Cambridge, Massachusetts, 1946, Loeb Classical Library, Agesilaus, I, 15, p. 66;

Կապադովկիան, Պափլագոնիան եւ Պիսիդիայի մի մասը⁸⁶:

Սկիւաքս Կարիանդացու տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Միւսիան սկզբնապէս տարածուել է մինչեւ թրակիական Բոսփոր՝ ընդգրկելով նաեւ ամբողջ Ասիանիան (ներկայիս Իզնիկ լճի շրջանը)⁸⁷:

Դիոդորոս Սիկիլիացին նոյնպէս Աքեմենեաններից առաջ եւ յետոյ բազմիցս յիշատակում է Լիւզիան⁸⁸, ընդ որում՝ Լիւզիան գրեթէ միշտ նշում է Փոնդիայի հետ: Դիոդորոսը յիշատակում է Միւսիայի սատրապ Օրոնտէսին⁸⁹, որին մասնագիտական գրականութեան մէջ նոյնացնում են Արմենիայի նոյնանուն սատրապին⁹⁰: Հետաքրքիր է, որ տուեալ տեղեկութեան մէջ Միւսիան եւ Լիւզիան յիշատակում են առանձին սատրապներով, ինչը խօսում է վարչական փոփոխութիւնների մասին:

Աքեմենեան թագաւորների հին պարսկական սեպագիր արձանագրութիւններում II սատրապութեան ցեղերից ու ժողովուրդներից յիշատակում են Լիւզիացիները, որոնք էլ ներկայացնում են նշուած

սատրապութիւնը: Ոսկով հարուստ Լիւզիան հին պարսկական արձանագրութիւններում յիշատակում է մայրաքաղաք Սարգէսի անունով հին պարսկերէն Սպարդա (լիւզիական արձանագրութիւններում *šfard-* կամ *švard*⁹¹) ձևով, եւ գրեթէ միշտ Կապադովկիայի եւ Հոնիայի միջեւ կամ վերջինիս կողքին, կամ էլ առանց աշխարհագրական յաջորդականութեան⁹²: Սատրապութիւնը յայտնի էր նաեւ սատրապական կենտրոն Սարգէսի անունով⁹³:

Այսպիսով, Աքեմենեան Պարսկաստանի II սատրապութիւնը կամ Լիւզիան տէրութեան հարուստ նահանգներից մէկն էր եւ պարսից արքունիքի համար ունէր բացառիկ նշանակութիւն, ինչը կապուած էր Փոքր Ասիայի արեւմտեան շրջաններում ստեղծուած ռազմաքաղաքական իրազրութեան հետ: Այս իրավիճակով էլ պայմանաւորուած՝ Լիւզիական սատրապութեան տարածքը պարբերաբար ենթարկում էր վարչական վերաձեւումների. որոշ ենթաշրջաններ դառնում էին առանձին սատրապութիւններ կամ միացում էին հարեւան սատրապութիւններին:

86 М. И. Максимова, *Античные города юго-восточного Причерноморья*, М.-Л., 1956, с. 105.
 87 Скилак Кариандский, *Перипл обитаемого моря*, с. 261.
 88 Դիոդորոս Սիկիլիացի, էջ 17, 47, 57, 60, 75, 110, 112, 113:
 89 P. Briant, *From Cyrus to Alexander*, pp. 642-643, 656, 658.
 90 Դիոդորոս Սիկիլիացի, էջ 75, 180; M. Weiskopf, *The so-called "great Satrap's revolt": 366-360 B.C.*, - "Historia", Heft 63, Stuttgart, 1989, p. 11, 13, 18, 70-71.

91 E. Herzfeld, *The Persian Empire*, p. 100, 311.
 92 R. Kent, *Old Persian. Grammar. Texts. Lexicon*. 2nd ed., New Haven, 1953, p. 117, 136, 141, 143, 145, 151, 156.
 93 Thucydides, *History of the Peloponnesian war*, with an English translation by Ch. F. Smith, Vol. I, books I-II, London, Cambridge, Massachusetts, 1956, Loeb Classical Library, I, 115, 4, p. 190.